

THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.




ՏԻՊՈՂՈՒՄԻ ՍԻՆՏԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ:

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 56

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 3 1898

ԳԻՆ 3 ՍԷՆՔ



ՁԵՅԹՈՒՆԻ ՍԻՆՏԱԿԸ

Ընդհ. Գանձապետը ցարդ ըստացած է. Արգէն ծանուցեալ \$270.92 Մանչէսթըրի Յանձնախմբին 56.00 Փորթլընտի Յանձնախմբին 37.00 Գուժար \$363.92

Պօսթօնէ կը գրեն թէ Նօրմըն փողոցի ճաճարանին մէջ, ճաշարանապետի թելադրութեամբ՝ 46 տօտար կանգանակուեր է, և հինգ անձերէ Յանձնախմբը մ'ալ կազմուած է կանգանակութիւնը շարունակելու համար. եթէ բոլոր կայ ճաշարաններն այս օրինակին հետեւին, անուար ճաշ մը տուած կ'ըլլան ամօթի Ձէյթուցուն:

Թրոյէն կը բողոքեն թէ անդուայն Յանձնախմբը չի ծանուցաներ թէ ինչ ըրած է կանգանակած դըրամը. ոմանք կ'ըսեն թէ գանձապետը առանց իր ընկերներու հաւանութեան Պորտին զրկած է զայն իսկ ոմանք կը կարծեն թէ դրամը յանձնախմբին քով կ'սպասէ տակաւին. երբ ժողովրդէն ընտրուած յանձնախմբը մը այս օրինակ պարագաներու տակ բացատրութիւն տալ չուզեր, կատարակութեան վստահութիւնը չարաչար գործածած կ'ըլլայ:

Փրօվիտէնտի կանգանակութիւնը, կը գրեն թէ, 300 տողարի չը պիտի կրնան հասցնել, վասն զի Ստրաճեան Սրբազան 243 տողար կանգանակելով՝ Ս. Փրկիչ եկեղեցւոյ հարկը Ձէյթուցին կանգանակութեան կերպիւ իւրք փնտած է երբ: Այս կանգանակութիւնն այժմ ընող մարմինը Ազգային Հոգաբարձութիւնն է, որ կը թուի թէ այս պատճառաւ խնդրեր էր Ստրաճեան Սրբազանէ յետաձգել առայժմ Ս. Փրկիչ եկեղեցւոյ կանգանակութիւնն:

Ձէյթուցիք մեր օրուան կենդանի եկեղեցիներն են, որք կրնան մեռնիլ, բայց Ս. Փրկիչը բնա մեռնելու վիճակի մէջ է՝ առաջ Հոյքը, վերջը եկեղեցին Հայուն համար...:

Մեր Ուսարբի թղթակիցը կը գրէ թէ Խենթի ներկայացումն և ցարդ եղած կանգանակութեանն գոյտցեր է 100 տողար, որ այս օրեր պիտի զրկուի Ընդհանուր Գանձապետին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՆՁԱՊԵՏԻ ՀԱՍՑԷՆ. MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY

ՄԵՍ ՀԱՆԴԵՍ Ի ՆՊԱՍՏ ՁԵՅԹՈՒՆԻ

Տեղի պիտի ունենայ Դեկտեմբեր 17, Շաբաթ երեկոյ ժամը ճիշտ 8ին ԸՍԲԱԹԻՇ ԲԱՑԹ ՀՈՂԻՆ ՄԷՋ 29րդ փողոց և Մատիսըն Աճիւր, Ն.Ե.

Յանձնախմբը շատ ճոխ յայտարար մը պատրաստած է այս կանգէսը շահեկան ու հրահանգիչ ընելու համար: Մանրամասնութիւններն պիտի հրատարակենք գալ շաբթու: Այս երեկոյ Ազգ. Ընդհանուր Ժողովոյ մէջ, որ տեղի պիտի ունենայ ի Գրէմբորի Լայսիլըմ, 6րդ Ա. ճիւր և 23րդ փողոց, Ընթաթիւ Բայթ Հօլի օթեակներուն 9 հատը պիտի վաճառուին փափագողաց. իսկ մընացեալներն առնուած են արգէն հետեւալ ազգայիններէ. Տեաք Ե. Թալաճեան, Գարակէօզեան, Քէլէկեան, Հրեմիւղ, Տօնճեան, Երուզուկեան, Պ. Յակոբեան, Պ. Գազանճեան, Տ. Գոստիկեան, Եարտըմեան, և Տքթ. Տաւրեան:

Հանգիսին մուտքը, հէթ չէքով միտին, 25 սէնթ է. տոմս կարելի է ստանալ Յանձնախմբի անդամներէն և խմբագրութենէն:

Այս առթիւ 7 անդամներէ բաղկացեալ օժանդակ Յանձնախմբը մ'ալ կազմուած է, որոյ պաշտօնն է ժողովրդէն նուէրներն հաւաքել, աճուրդով վաճառուելու համար: Նուէրներ կը զրկուին նաև Յանձնախմբի Աստնապետ՝ Տ. Քէլէկեանի. 303 Երդ Աճիւր, և Լրագրոյ խմբ.

Վաղը եկեղեցւոյ աւարտումէն յետոյ, Հայկական Կաճառի ժողովրդեկ պիտի ունենայ Ս. Ոսկեբերան եկեղեցւոյ մէջ: Անդամք հրաւիրեալ են:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Դառնադոյն դոյժ մը հրատարակուեցաւ այս շաբթու տեղական թերթերու մէջ, որ բարեբաղդաբար տակաւին կը կարօտի ստուգութեան. Լօստօնի թայմըզի Կ. Պօլսոյ թղթակիցը կը հեռագրէ իր թերթին թէ վանի մէջ կրկին ջարդուեր են բաւական թուով Հայեր՝ վստայ վալին և թուրք մամուլը, կը յաւելու թըղթակիցը, կը հերքեն լուրը ըստ սովորականին:

Գուժին ստուգութիւնը այս հերքումներէն աւելի կ'ստուգուի քան կը հերքուի:

Կ. Պօլսոն ուրիշ հեռագիր մ'ալ կ'ուզայ յայտարարող թէ թուրք նախարարները միաձայնութեամբ բարենորոգումներու նոր ծրագիր մը ներկայացուցեր են Սուլթանին՝ Օսմ. կայսրութեան համար. բայց Սուլթանը բարկանալով իր նախարարներու այս յանդէմութեան, դանտք անմիջապէս պաշտօնանկ ընել մտադրած է. հեռագիրը կ'ըսէ նաև թէ Սուլթանը դժուարութիւն կը քաջէ գտնելու:

րիշ նախարարներ, որոնք բարենորոգմանց համարիտ չը գտնուին:

Յունաստանի ձորձ իշխանը շորս Տէրութեանց՝ Անգղիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ և Ռուսիոյ կողմէն՝ Կրէտէի կառավարիչ ընտրուեցաւ: Աթէնքի Երօպական դեսպանները պաշտօնապէս հաղորդեցին այս անուանումը Յունաստանի թագաւորին:

Աթէնքի փողոցներուն մէջ Յոյն ամբողջը բուն ծափահարութեամբ ողջուեր է կառավարիչ իշխանը, որն այս օրեր կը մեկնի Կրէտէ:

« ԽՆԵՐՆ » ԾՈՒՍԹԸՐ

Ուսթըր, 26 Նոյ. Տեղւոյս Դերասանական խումբը, անցեալ Հինգշաբթի իրիկուն, ներկայացուց « Խնեթը » ի նպաստ Ձէյթուցին: Բաւական լաւ կերպով պատրաստուած էր դերը, և բաւական յարմար էին նաև դերասանները. մանաւանդ Տանտէր Խաչօն և Վարդանը: Սրանք գրեթէ լեցուն էր, որն մեծ քաջակերպ մը կրնայ ըլլալ, երիտասարդ դերասաններուն՝ անոնց ճիշդ և ջանքը բողոքապատկելու համար: Ասոնք իրական շքանորակալութեան արժանի են այսօր որ իրենց աշխատանքով օգտակար եղան կարծի Ձէյթուցին: Բազմութեան նայելով՝ հասոյթը թերեւս \$ 45 եղած ըլլայ:

Ներկայացումը լրանալէն յետոյ, Մաշտոց վարդապետը շնորհակալութիւն յայտնեց հանդիսականաց, որ իրենց ներկայութեամբ կը քաջալերէին ձեռնարկը: Ըսաւ նաև թէ « Կարծեմ այս ներկայացման արդիւնքը միացնելով առջի կանգանակութեան \$100 կ'ըլլայ, ասով Ուսարբին իր պարտականութիւնը կատարեց. և իր բաժինը ունեցաւ Ձէյթուցին կանգանակութեան մէջ »: Չ'ենք գիտեր թէ վարդապետը գիտակցաբար ըսաւ այս խօսքերը, թէ անգիտակցաբար: Ուսարբին այս ներկայացման գալով՝ իր պարտականութիւնը կատարած եղաւ արդեօք. միթէ նոյնչափ բազմութիւն պիտի չըլլար եթէ տարբեր նպատակի համար ներկայացուէր դերը. և կը հարցունենք Հայր Սուրբին. թէ Ուսարբին \$100 տալով իր պարտականութիւնը կատարած կ'ըլլայ...: ԱՐՈՒՍ

Մեր Ուսթըրի թղթակիցը կը գրէ:

Անցեալ Հինգ շաբթի Ամերիկեան Շնորհակալութեան օրը՝ Ս. Փըրկիչ եկեղեցւոյ մէջ Հայաստանի բոլոր նահատակացի համար Հոգեհանգիստ կատարուեր է, և այս առթիւ Մաշտոց վարդապետը Դամբանական մը խօսեր է: Որոշուած է որ սոյն օրը ամէն տարի Հայաստանի նահատակացի յիշատակին նուիրուի:

Ուսարբի Հայ Ամերիկեան քաղաքացիները միութիւն մը կազմէր են անցեալ շաբթու Արմէնո-Ամերիկեան քաղաքացեաց ակումբ անուամբ: Այս միութեան նպատակն է Ամերիկեան սովորութիւնները հայոց մէջ ընտանեցունել, և ի հարկին պաշտպանել Հայոց շահերը:

ԱՂԱՏ ԼՍԱՐԱՆ

Չիմընի Գորնըր Հօլ, Թիւ 57 Ուէսթ 25րդ փողոց: Այս Կիրակի երեկոյ, ժամը ճիշտ 8ին ՅԱՅՏԱԳԻՐ

- 1. Երգ— Տրք. Մ. Թաշճեան և Գ. Արվանեան.
2. Բանախօսութիւն— Ելեքտրականութիւնը— Թ. Չ.
3. Արտասանութիւն— Պ. Մ. Կրտիչ Քէշիշեան.
4. Երգ. Պրք. Մ. Թաշճեան և Գ. Արվանեան.
5. Հակաճառութիւն

« Կուսակցութիւններն միացած թէ անջատ գործելու են »: Հաստատակարարն պիտի պաշտպանէ Տ. Չիմընեան իսկ բացասականն՝ Հ. Է.

Վարչութիւնը կը խնդրէ ժողովրդէն որոշեալ ժամանակին ներկայ գտնուիլ, 10 ու կէսին կրնալ ցրուելու համար:

Վաղը Ուէսթ Հօլօքընի ազատ Լսարանին մէջ, Սարոյ փողոցի անկիւնը, պիտի խօսի Տքթ. Արշակունի ծխելու վնասակարութեան վրայ:

ԿՈՐԵՒՈՐ ԱՂԻԵՐ

Սերաստացի Յովհաննէս Ոսկեանի այժմեան կասցէն կը փնտուռի բարեկամի մը կողմէն որ կարևոր գըրելիք ունի իրեն: Իմացնել Լրագրոյս խմբագրութեան:

ԺԱՄԱԳՈՐԾ

Կը նորոգեմ ամէն կարգի ժամացոյց, դերամատչելի գներով. մեզ դիմողներ գոհ են և պիտի մընան. դիմեցէք:

Թիւ 159 Իսթ 26րդ փողոց, առաջին յարկը: Ս. Մ. ԵՐԷՑԵԱՆ

ՈՎ ԿՈՒՁԷ ՈՐԴԵԳՐԵԼ

Պ. Ա. իր կնոջ մահուան առթիւ ստիպուած է իւր 7 ամուսնու աղջիկը մէկի մը որդեգիր տալ. և յանձն կ'առնէ վճարում մ'ալ ընել անոր՝ որ կը հաճի մարդասիրաբար իր դուստրը պահել և խնամելու տանիլ, Գրել խմբագրութեան:

ԿՈՒՁՈՒԻ

Հայ աղայ մը կ'ուզուի՝ 15—16 տարեկան. նպարավաճառի մը քով գործելու, գոհացուցիչ վարձքով: Դիմել Ս. Ասլանեան 317 Իսթ 45րդ փողոց:

TURKISH GEMS,

Նարէտտին հօճային մէտէլներուն Անգղիերէն կոկիկ թարգմանութիւնը՝ կանգնած հօճային պատկերովը, մաքուր սպաքրութեամբ գըրոյկի մը վերածած եմ, որն որ Ամերիկացի և այլ բարեկամաց նուէր տալու շատ յարմար է: Գինը 25 սէնթ է, զրկելու ծախսը վրաս:

Դիմել—Պատ. Ս. Վ. Պէտրիկեան, Rev. S. V. BEDICKIAN, 275 Ridge Ave, ALLEGHENY, PA.



ՇԱՐԱԹԱԹԵՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Կը հրատարակուի մինչև Շարաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂԱՄՐԻԿԵԱՆ, ԿԱՆԱԶԱԳԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵՆԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Table with 3 columns: Item, Price, and Total. Includes items like 'Տարեկան', 'Վեցամսեայ', and 'Եռամսեայ'.

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 3 1898.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր գրականութիւնը մենք իսկ չենք ճանչնար ամբողջապէս և ինչպէս որ պէտք է: Մեր նախնիքներուն ձգած ձեռագրերէն հրատարակուած են միմիայն պատմական ու կրօնական գործերը, այն պարզ պատճառով որ հրատարակողները վաճառականներ եղած են ընդհանրապէս: Նոյն իսկ այդ պատմական ու կրօնական գործերը փակ կը մնան իսկ ժողովրդին կամ տարածութեան ծանօթ են անոր, որովհետև անոնք իրենց գրաբար բնագործը գոյութիւն ունին լոկ, և ժողովրդին մեծամասնութիւնը գրաբար չի գիտեր և չի կրնար գիտնալ:

Պորենացի, Փարսկացի, Եղիշէն, Հաստիվերացի, Բիւզանդացի, Նարեկացի, Ենիբազան, Լամբրոնացի խորհրդաւոր ստուերի մը մէջէն երեցած են միշտ մեր ժողովրդին, և գրաբար գիտող փոքրամասն հայեր միայն մօտէն ճանչցած և վայելած են անոնց գործերը: Ստուար զանգուածը որ ազգը կը կազմէ՝ անոնց վրայ տեղեկութիւն ունի ազգային պատմութեանց կամ հասարակական ուսումնասիրութեանց մէջ անոնցմէ յիշուած կտորուանքներէն: Կենսական պէտք մը լրացուած կըլլար եթէ հայ մտքին այդ վաղեմի մշակներուն արտաբերութիւնները արդի հայութեան ներկայացուէին՝ այսօրուան հայերենին վերածուած:

Ռուսահայերը այս պէտքը առաջին զգացողները եղած են. իրենց բազմաթիւն Հիւսիսամերիկայի մէջ, Նապրեան և Նալբանդեան քաղաքներ անգամ յայտնած են հին մասնագրութեան կարեւոր գործերը աշխարհաբարի վերածելու միտքով. և արդէն փափաքն իրականացուցած ալ են, մէկը թարգմանելով Լամբրոնացոյն Տարօնի ճառը, միւսը՝ Փարսկացոյն նամակն առ Վահան Մամիկոնեան. անկից ի վեր Տ. Պորէն Սահփանէ այդ ճամբուն մէջ ամենէն կարեւոր քայլն առած է՝ թարգմանելով Պորենացոյն պատմութիւնը: Արեւմտեան Հայոց մէջ, զեռ ոչինչ փորձուած է այդ ուղղութեամբ. և սակայն ինչ շահեկան աշխատութիւն մը պիտի ըլլար հին մեծագուշակ լեզուին այդ անգին էջերը մեր արդի ճիւղն ու գողարկի լեզուին վերածել և առ ամէն կողմ ցրուած ժողովրդին, որ պէս զի ամէն մէկ հայ անհատի կարելի ըլլար ազգային հին կենսքն ու հին միտքը մտերմապէս ճանչնալ: Ինչո՞ւ ամէն հայ չ'ունենայ Եղիշէ մը, Փաւստոս մը, Պորենացի մը իր ձեռքին տակ, իր բարձրին մօտ, իրեն մատչելի, իրեն ընտանի լեզուով: Յուսալով որ Միլիթարեան հայրերը, որոնք ամենէն աւելի հեղինակութիւն ունին և միջոց՝ այդ այնքան դժուարին որքան սիրուն գործը կատարելու, ուղղութիւն կը դարձնեն այս կարեւոր պահանջին, մենք պիտի ջանանք Անահիտին մէջ մեր նախնի մասնագրութիւններէն գեղեցիկ հատուածներու թարգմանութիւններ հրատարակել մերթ ընդ մերթ, ինչպէս արդէն փորձած ենք Պօլիս՝ Մաղիկ հանդէսին մէջ՝ Նարեկացոյն մէկ քանի աղօթքներուն թարգմանութեամբ, որ շատ սիրալիր ընդունելութիւն գտաւ հասարակութենէն: Կը կարծենք որ այս ձեռնարկը կրնայ հիմնական ազդեցութիւն ունենալ մեր արդի գրականութեան վրայ, անոր աւելի մօտէն փոխանցելով մեր սոհմային վաղեմի ոգին ու ոճը, բուն հայ գոյնն ու ճաշակը:

Միայն գրաբար ընդգրով հրատարակուած ու կրօնական ծանօթ՝ պատմական և կրօնական գործերը հանրածանօթ դարձնելու գործէն զատ, կայ ուրիշ գործ մը, նոյնպէս և թերեւս աւելի կարեւոր. այն է կրօնական հանել ինչ որ կայ զուտ գրական և աշխարհական, ազատ ոգով գրական՝ մեր հին մասնագրութեան մնացորդներուն մէջ. ընդհանրապէս մեր նոր սերունդները անտարբեր մնացած են մեր նախնի գրականութեան, այն տարածուած կարծիքին վրայ հիմնուելով թէ այդ գրականութիւնը միմիայն կրօնական և ժամանակագրական է և գեղեցկաբարտական ու է հրապարակչութեան համար: Այդ նոր սերունդները ամբողջապէս անած են օտար գրականութիւններով, և օտար համար է որ արդի հայ մասնագրութեան մեծ մասամբ ոգով ու ձեռով ծայրահարկող օտար և նմանողական է, և չ'ունի առճամային դրոշմը, անգոյնն և ցեղական համու հոսք՝ որ ճշմարիտ և կենդանի գրականութեան հիմը կը կազմէ:

Այդ միօրինակութեան մեղադրութիւնը անիրաւ է և սխալ: Անշուշտ ոչ բազմաթիւ, բայց կան հինէն մնացած ձեռագրութիւններ մէջ՝ զուտ գրական շահեկանութիւն ունեցող, աշխարհական զգացումներ թարգմանող կտորներ. այսպէս՝ անհամար երգեր սիրոյ, խնջոյթի, մահուան, նկարագրութիւններ քաղաքներու, երկիրներու. դիւցազնական և պատմական քերթուածներ. երգիծանքներ և շ. ասոնց մեծ մասը գրուած խառնակ զբոսբարով մը կամ գրեթէ բոլորովին ռամկական հայերէնով մը: Մեր նոր հայերէնին ու մեր նոր գրականութեան արմատներն են օտանք, և արդի հայ գրողներն համար դանձնք ճանչնալն և ուսումնասիրելն մասնագրական դաստիարակութեան հակառակ մէկ սարբը պէտք է կազմէ:

Հայ բանաստեղծութեան այդ հասարակատարներէն հանդէսներու կամ լրագրութիւններու մէջ հրատարակուած են երբեմն կցկտուր էջեր. բայց դեռ, բաց ի ֆոնար Հայկականին կամ Հ. Ա. Տէվհանցի Հայրագին պէս մասնական հասարակութիւնէ, մեր ազգային բանաստեղծութեան ամբողջական և կանոնաւոր հրատարակութիւն մը չ'է երեցած: Պիտի ջանանք այդ պակասն ալ մասամբ լրացնել՝ Անահիտի մէջ երբեմն երեան բերելով մեր ժողովրդին հագուան այդ ուղղակի և կենդանի բացատրութիւնէն հասուածներ:

Այս անգամ կը սկսինք աշխարհաբար թարգմանութիւնը հրատարակել սիրուն արձակ քերթուածի մը, որուն հեղինակն է Երեւանցի Չաքարիա Մարգար Պոնկնց անուն բանաստեղծ մը և որուն տիտղոսն է իր գերբարձր ձեռով «Բարառական դիմաձուլութիւն վարդոյն և սոխակին»: Այս գործը զերծ չ'է կրօնական ոգիէն. ստուածարանական թաքուն հիմի մը վրայ հաստատուած է. սիրոյ պատկերներով Հոգւոյն և Աստուծոյ միասնական տարիանքը կը ձգտի այլարանել (ինչպէս հեղինակն իսկ կը բացատրէ իր (Ձեկուցմունք) ին մէջ). բայց պատմութիւնը արեւելի ամենէն սիրական, ամենէն անուշ աւանդութիւններէն մէկուն վրայ կ'ուղորդուի. այն է զարափարական տարիանքը Վարդին և սոխակին, զոր մտնաւանդ պարսիկ բանաստեղծները այնքան քնքուշ գործվանքով երգած են: Մեր քերթողը պարսկական զբոյցը առած, ճոխացուցած. զայն զմայլելի կերպով մարդկայնացուցած, ամբողջ փրկաստեղծութիւն մը հանած է որ իր միամիտ՝ բայց զգայուն ոգովն ու գերացող սիրոյն հոգեբանութիւնը այսքան փափուկ գծերով արտայայտուած է. և միասնական խորքը՝ անուշ ու հեռաւոր հրա-

պայք մը կ'աւելցնէ քերթուածին հեշտալիր պատկերին, ինչպէս վերածնութեան առաջին շրջանի Իսայայի քերթուածն ու մէջ՝ որոնք գեղեցկութեան սէրն ու Աստուծոյ սէրն իրարու կը հիւսելին: Գործող արար որոշ չի գիտցուիր թէ ո՞ր դարուն ապրած է այս Մարգարը, ինչ կենսք ունեցած և ուրիշ ինչ գործեր արտադրած է: Հաւանական կը թուի որ ժ.Չ. Գարեբուն ապրած ըլլայ, և յայտնի է որ, Երեւանցի ըլլալով, պարսկագէտ եղած է, և ծանօթ՝ պարսկական բանաստեղծութեան, որուն ազդեցութիւնը կ'ըզգացուի այս քերթուածին մէջ: Վարդ և Սոխակին գրաբար բնագրերը արդէն ապուած է Ս. Բեթիւրյանի մէջ. բայց այսօր ըստ պատճառ և անգամանակի է. երկրորդ ապագրութիւն մը՝ աշխարհաբար թարգմանութեանը հետ միացած՝ գործ մըն է ջերմապէս յանձնարարելի: Ա. Չ. (ԱՆԱ.ՀԻՏ)

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՌ. Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

Պարոն, ՏԻԳՐԻՍԻ 52րդ թուին մէջ առ մեզ ուղղուած պատասխանագրով մը Ձեր առաջին գրաբարութիւնը ետ կանէք, սակայն նոր մը սուպրէզ կը նետէք ըսելով թէ «մեր կուսակցութիւնը ձեռքի տակէ խորձանքներու և խեղաթիւրումներու գիծեր է, ամենաստուարի կերպով արտատարուած Հնչ. կուսակցութիւնը ընդհանրապէս և այս ու այն գործիչը մասնաւորապէս: Կ'երևի թէ դուք Մարտ և Նոր կենսք չ'էք կարդացեր, ուր մեր կուսակցութիւնը դաշնակցութեան վրայ ընդհանրապէս շարունակ կը յարձակի:

Իսկ Արփիարի խնդրին համար այսքան կ'ըսենք. Գաղղիացիութիւնը իր փաստեր փողոցէն հաւաքած չ'է, որպէս դուք կը ջանք ցուցնէ: Իսկ այդ փաստերը երևան հանելու համար, Նոր Հնչակեանք պարտին պատուոյ տեսանք ի ներքուստ սկսիլ: Ձեր յիշած Տրէյֆուսի խնդրէն դաս առէք. Գաղղիացիք տակաւին Գերմանացոյց չ'են զիմած այդ խնդրին համար. թերևս օր մը զիմեն եթէ իրենց մէջ խնդիրը չըլուծուի:

Ձեր մէջէն Արփիարը ամբաստանողներու լէգէոն մը կայ: Ուր էք դուք. ուր է մեր պատուոյ տեսանք: Նախ ձեր ինքները ջերմացէք: Ի դիմաց Հ. Յ. Դաշ. Ա. մեր. Կեդր. Կոմիտէի Ատենապետ Ատենապար ԱՍՐԴԳԵՍ ԲԱԲԳԵՆ

Պ. Հ. ՃԱՆԺԻԿԵԱՆ B. H. ANJIGIAN, NO. 86 HUDSON STREET, BOSTON, MASS.

Պատիւ ունի ծանուցանել թէ ձանձրիկեան տունը, որ հանրածանօթ է Արապղիի, Ակնայ, Պարբերի, Մարթիայի և ուրիշ քաղաքներու մէջ, երկու տարիէ ի վեր իր միջոցաւ ճիւղ մը հաստատած է Հոս. Փ. գրով. դրամ փոխադրելու համար թուրքիայ: Այս տան ապահովութեան մասին ըսելու ենք թէ ձանձրիկեան տան հետ գործ ընող ամէն մարդ գոհ մնացած է: Այս միջոցաւ Թուրքիայ զրկուած դրամը նախ Պօլիս Պօրտ Ընկերութեան Գանձապետ Մ. Փիթի կը զրկուի, և սա անկէ կը յղէ դրամը Պարբերի Մ. Պարնըմի Տ. Յ. ձանձրիկեանի տրուելու, ուսկէ ամենայն հաւատարմութեամբ կը յանձնուի կամ կը արուի գրամիջոցներուն:

Կը վաճառուին նաև մերքով Յրէնչ, և Հօլլանդ շոգենաւային ընկերութեանց տոմսեր գոհացուցիչ գներով:

ձանձրիկեանի Հաւատարմութիւնը և իւր բոլոր գործերը Պօրտ Ընկերութեան Պօլսոյ դանձապետի՝ Մ. Բիթի հետ ընելը կը հաստատուի. նաև ձանձրիկեան տան հետ գործ ընողներն կ'ապահովուին: Մ. Հ. Հիթթօթ

S. & N. D. MERHIGE & Co.

92 WASHINGTON ST., NEW YORK.

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ք

Հին և նոր ամեն անակ զգեստերու, Գաղղիական գոհարեղէններու թէ՛ իրական և թէ՛ նմանութիւն: Կը վաճառեն արեւելեան և ասիական ամեն անակ անգղիական դրոշմեր, սեղանի, գաշնակի, մէնթըլի, ևն. ծածկոյններ ոսկեթել և մետաքսաշիւս: Դամաւի մետաքսէ և մանածէ վարադոյններ, Հալէպի ապպանի, քէֆիաներ ևն.

Հայ անհասանելի ինչպէս նաև Հայ խանութպաններ ու վաճառականներ երբ պէտք ունենան այս կարգի ապրանքներու, 10 առ 100 շահելէ դատ, գոհ պիտի մնան այս ծանօթ վաճառատունէն գնելով: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք ճշտաւ կը կատարուին:

ՊՈՒՂՈՒՐԻ--ՊՈՒՂՈՒՐԻ--ՊՈՒՂՈՒՐԻ

ՊԱՆՏԱՍՐ ԹԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co.,

53 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արդոյ Հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ՝ Հասարակութեան յաջողութիւնն ընկածն է գործարան մը վերայից: Եւ անուան ապէ: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն գերազանցելի գններով կը վաճառուին, այլ և մաքուր թեւեռն ու տեսակի կողմէ անհամեմատ ցնորք են ուրիշներէ:

Խոնարհութեան համար խոշոր կամ մանր պաշտօնի փառանք կարծէ 3 սէնթ, իսկ տուններու համար 3 1/2 սէնթ: Տուններու և ճաշարաններու համար դիւրութիւն տալու նպատակաւ որոշուած է մինչև 25 փառանք քանակութեամբ ապրանք վաճառել: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշտաւ կը կատարուին: Փորձեցէ՛ք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Վճարումներ կանխիկ կըլան: Ճանապարհի ծախսը գնողին վրայ է:

ՊՈՒՂՈՒՐԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ.

BULGUR MANUFACTURING CO.

151 Union St., WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն թէ երկարատե փորձառութեան շնորհիւ իրենց շինած պաշտօնը մեծ ընդունելութիւն գրած է ամեն տեղ: Առանց քարի և անխորժ հոտի Պուլըուրը ամեն Հայ առանձ կը փնտռուի: Մենք, որ միակ Պուլըուրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար: Մեր յաճախորդք եթէ գոհ չի լինին մեր ապրանքներէն գրասիրին ետ կը արուի, թէ և ցայսօր ոչ մի Հայ տեղագրութիւն յայտնած է: Մեզ համար կը վիպան Հայ տիկիներ:

Պուլըուրի լիւրան կարծէ 3 1/2 սէնթ խանութներու և ճաշարաններու համար: իսկ տուններու համար 4 սէնթ: Յանձնարարութիւն ճշտաւ կը կատարուին: Փորձեցէ՛ք անգամ մը և գոհ պիտի մնաք:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ սոցիալական, քաղաքացիական, հրատարակչական, շրջաբերականներ, տեսարաններ ևն:

Մեր գնեցող գոհացուցիչ են. ապագորութիւնն մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

ԹԱՇՃԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ք

573-579 ԲԵՅՄՊՐԻՃ ԸՍԹՐԻԹ ԲԵՅՄՊՐԻՃ, ՄԱՍՍ.

Պատիւ ունի ծանուցանել արդոյ Հասարակութեան թէ իւր պատրաստած հացը թէ՛ գնի և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել: Ո՛չ կը փշրի և ոչ ալ թթու է: 1 փնտ. հացը 3 սէնթ միայն կարծէ: Միւր միջոցով է ու գնեցող գոհացուցիչ: Կը վաճառէ նաև ամուսի, քարիւղ և լիւրանիք փայտ: Ունի առանձին ճաշարան մը կցած յիշեալ ճիւղերուն, ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ. առատ և սոսան: Մասնաւոր կառք ունի տուն փոխադրելու համար, իսկ առանձին փոխադրելու համար, իսկ առանձին փոխադրելու համար, իսկ առանձին փոխադրելու համար, իսկ առանձին փոխադրելու համար:

ՅԱՊՈՒ ԲԱՐՍԿԵԱՆ

Ամերիկեան և Արևելեան ընդհանուր նպարավաճառ-կրօսքրիս,

Թիւ 45 Էքսչէնճ փողոց, Ուսթըր:

Կը ծանուցանէ թէ գնեցող չափազանցեալ և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանցեալ ուրիշ նպարավաճառներէ:

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

Ա Ռ Ա Ջ Ն Ա Կ Ա Ր Գ Դ Ե Ր Չ Ա Կ .

Թիւ 628 Յրդ Ափիւ, Նիւ Եորք:

ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ Ընտիր կերպասեղէններէ վայելուչ հագուստներ կը շինէ դիւրամատչելի գիներով:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Յերբող Տպագրութիւն

Մաքուր Սըմբուրիւ


Հրատարակչ

Կը բաղկանայ 25 մեծագիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գինն է,
Կտուեայ կազմ 62 տղ. 50 սէնթ
Կէս կաշիակազմ 87 " 50 "
Փառակազմ 100 "

Առաջին տեսակէն կը դրուի տեսնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տղար 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տղար, իսկ վերջինին՝ 4 տղար:

Այս Համագիտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է: Ինքնուրուի տեսակաւ և ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել խորագրութեան:



Ա. ԹՓՈՒՉԵԱՆ,

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱՍՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք.

Այս խանութին մէջ կը վաճառուին ամեն տեսակ կոշիկներ իսկառ առանձին գնեցող: Մեր Հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր պատրաստած կոշիկներ կը կարենք ձևաւոր և վայելուչ կերպով: Կը նորոգենք Հին կոշիկներ չափաւոր գնեցող: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց
Որանց կոշիկներ \$1.25է մինչև \$5.00
Կանանց " \$1.25 " \$2.50
Տղայոց և աղջկանց կոշիկներ \$0.50 " \$1.50

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՋԻ ԴԵՂ



Կը դորացնէ, կը մաքրէ, կը փայլեցնէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփեղ: Միանգամ փորձել բաւական է սաղմոսն արժէքը դիտարկելու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով: Կը ծախուի բոլոր դեղագործներուն քով: Կին 50 Սէնթ միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութեան:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, Թիւ 45 Էքսչէնճ րսթրիթ, Ուսթըր, Մասս:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵՏԱՔՈՒՍԱԿ (ՉՕՄԵՂ) ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Արևելեան և Տաճկական Ապրանք
Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու Եորք: 20ն կը վաճառուին ամեն տեսակ սոցիալական անգղիական, սեղանի, մէնթըլի, փիտանոյի ևն. մետաքսեղ և ոսկեթել ծածկոցներ, Դամաւեղով վարադոյններ, Բերրայի աղապանի, քէֆիա, ևն. ևն:


Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրեկներն չափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո՛ր է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ:

MARK C. MEAGHER,

St. Paul Building, No. 220 Broadway, New York City.
ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՂՈՒԱՐ ՄԵՏԱՔՈՒՍԵՆ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

\$1.00

Շարափական լար վճարելով միայն ՄԷԿ տոբակի տեղի Մուրէյ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Ֆլըշինկի կից: Սա տեղը ծովի մակերևոյթէն 120 ոտք բարձրութիւն ունի, ուր 34րդ փողոցի Ֆէրրիէն Հիլք սէնթով կերթցուի 19 րոպէէն: Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթեկուցութեան համար ձրի տոմս կը արուի: Երթալ ու գողներն ամեն Հիլքը շարքի և Կիրակի օրեր, կէս օրէ վերջ ժամը մէկ և կէսին, ներկայ գտնուելու են Լոնի Ասլընտի Ֆէրրիէն առջև, Իսթ 34րդ փողոց, ուր պիտի կրնան տոմս ստանալ Տ. Ս. Եարաբժեանէ, որոյ հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:



ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող գտնուիչ հրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամեն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարքու, կէքթըրթայի շինելու և տպագրութեան ծախսերն, վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար գրեւ լրագրոյս խմբագրութեան:

